ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

# ՀՐԱՄԱՆ

Երևան Մ.Խորենացու 3

«17» փետրվարի 2014 թ. N2/71-Ա

## Շ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, Ա.ՊԱՊՅԱՆԻՆ, Կ.ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հարկային ծառայության մասին,, ՀՀ օրենքի 25 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցնացնող հանձնաժողովի 11.02.2014թ. թիվ 08/2014 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի տարածքային հարկային տեսչության Ստուգումների բաժնի գլխավոր հարկային տեսուչներ Շավարշ Խաչատրյանին, Արամ Պապյանին, հարկային տեսուչներ Կարեն Առաքելյանին և Աշոտ Մարտիրոսյանին ենթարկել նյութական պատասխանատվության 8400 /ութ հազար չորս հարյուր/ դրամի չափով:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Ֆինանսահաշվային վարչության պետ Ջ.Պողոսյանին.

- անհրաժեշտ հսկողություն իրականացնել սույն հրամանի 1-ին կետում նշված աշխատակիցներից գումարի գանձման ուղղությամբ:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ Անձնակազմի կառավարման վարչության պետ Ե.Սարգսյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ